

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԱՄԲԻՈՆ

Դասընթաց՝ «Հայոց լեզու և գրականություն-1»
Որակավորման աստիճան՝ բակալավրի կրթական ծրագիր

ԿԱԶՄՈՂՆԵՐ՝ Լ. Հայրապետյան (բ. գ. թ., դոց.), Ա. Մուրադյան (բ. գ. թ., ասիստ.)

ԵՐԵՎԱՆ – 2015

ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հայոց լեզու և գրականություն-1»-ը պարտադիր դասընթաց է՝ նախատեսված Երևանի պետական համալսարանի լրագրության ֆակուլտետի բակալավրատի 1-ին կուրսի ուսանողների համար (առկա ուսուցում): Դասընթացին հատկացված է 32 ժամ, որից 8-ը՝ դասախոսություն, 24-ը՝ գործնական պարապմունք (շաբաթական 2 ժամ):

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դասընթացը բաղկացած է երկու հիմնական մասից: Դասախոսություններով նախատեսվում է ուսուցանել հետևյալ հարցերը. լեզուն որպես հաղորդակցության միջոց, լեզու և խոսք, հայոց լեզվի տեղը աշխարհի լեզուների շարքում, զարգացման փուլերը, արևելահայերենի և արևմտահայերենի հիմնական տարբերությունները, հայերենի ուղղագրության սկզբունքները, ուղղախոսությունը, հնչյունական համակարգը, հնչյունափոխության տեսակները, բառագիտության բաժինները, իմաստափոխության տեսակները, բառապաշարը, բառապաշարի հարստացման ուղիները, դարձվածքներ, բառակազմություն, բառերի տեսակներն ըստ կազմության, ածանցում, ածանցների տեսակները, հապավում, բառարանագրություն:

Գործնական պարապմունքները ուղեկցվում են դասախոսությունների և հանձնարարված տեսական գրականության համադրական քննությամբ: Օգտագործվում են գործնական վարժությունների ձեռնարկներ, մամուլի և հեռուստատեսության լեզվի փաստական նյութի հիման վրա կատարվում է լեզվական վերլուծություն, քննարկվում են հանդիպող սխալները, շեղումները, տրվում են առաջադրանքներ, որոնք նպաստում են գիտելիքների յուրացմանն ու ամրապնդմանը: Քննարկվում են աշխատանքային գրագրության տեսակները՝ դիմում, ինքնակենսագրություն, բնութագիր, բացատրագիր, զեկուցագիր, հրաման, կարգադրություն, տեղեկանք, երաշխավորագիր:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել հայոց լեզվի հնչյունաբանությունը, բառագիտությունը, ճանաչել տալ հայերենի հնչյունաբանության, բառագիտության բնորոշ հատկանիշները, դրանց դասակարգման հիմունքները, ճիշտ խոսելու և գրելու կանոնները:

ԿՐԹԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.

- ամփոփ և ամբողջական պատկերացում ունենալ հայոց լեզվի հնչյունաբանության, բառագիտության մասին, գիտելիքներ ձեռք բերել նշված ոլորտներում զարգացման ընդհանուր միտումների, լեզվական տեղաշարժերի վերաբերյալ,

- տարբերակել ճիշտ և սխալ ձևերը, կատարել ինքնուրույն վերլուծություններ, դիտարկումներ,
- ճիշտ և տեղի՞ն կիրառել լեզվական իրողությունները հատկապես զանգվածային լրատվության միջոցների լեզվում:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դասախոսություններ, գործնական պարապմունքներ

1. Լեզուն որպես հաղորդակցության միջոց, լեզու և խոսք: Հայոց լեզուն աշխարհի լեզուների շարքում, զարգացման փուլերը: Հայոց լեզվի 2 տարբերակները՝ արևելահայերեն և արևմտահայերեն: Հայերենի ուղղագրության հիմնական սկզբունքները, ուղղախոսություն: Շեշտը հայերենում: (2 ժ. դաս., 4 ժ. գործ.)
2. Հայերենի հնչյունական համակարգը, հնչյունների դասակարգումը:
Հնչյունափոխություն: (2 ժ. դաս., 4 ժ. գործ.)
3. Բառագիտության բաժինները: Բառի մեմիմաստություն և բազմիմաստություն, իմաստափոխության տեսակները: Հայերենի բառապաշարի դասակարգումը ըստ ծագման: Բառապաշարի գործուն և ոչ գործուն շերտեր: Բառապաշարի հարստացման ուղիները: Տերմինաբանություն: (2 ժ. դաս., 8 ժ. գործ.)
4. Բառապաշարի ձևաիմաստային խմբերը: Դարձվածքներ: Արմատ և ածանց: Ածանցում, ածանցների դասակարգումը: Բառերի տեսակներն ըստ կազմության: Հապավում: Համառոտագրություն: Բառարանագրություն: (2 ժ. դաս., 8 ժ. գործ.)

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1984:
2. Գաբրիելյան Վ., Գրավոր խոսք, Եր., 2007:
3. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Եր., 2007:
4. Եզեկյան Լ., Ոճագիտություն, Եր., 1999:
5. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Դասընթացի ավարտին գիտելիքները ստուգվում են բանավոր հարցման՝ ստուգարքի միջոցով, որը անցկացվում է ուսանողներին նախապես տրված հարցաշարի հիման վրա:

ՀԱՐՑԱՇԱՐ

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-1» ԴԱՍԸՆԹԱՑԻ ՍՏՈՒԳԱՐՔԻ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

1. Լեզուն որպես հաղորդակցման միջոց, հիմնական հատկանիշները: Լեզու և խոսք: Խոսքի դրսևորումները. համառոտ և ծավալուն խոսք, արտաքին և ներքին խոսք, գրավոր և բանավոր խոսք:
2. Հայոց լեզուն աշխարհի լեզուների շարքում: Հայոց լեզվի ձևավորումը:
3. Հայոց լեզվի տարբերակները՝ բարբառներ, խոսակցական լեզու, գրական լեզու: Հայերենը որպես պետական լեզու:
4. Գրական հայերենի զարգացման փուլերը՝ գրաբար, միջին հայերեն, աշխարհաբար:
5. Հայոց գրական լեզվի երկու տարբերակները՝ արևմտահայերեն և արևելահայերեն: Արևմտահայերենի ձևավորումը:
6. Արևմտահայերենի հնչյունական, բառապաշարային և քերականական հիմնական առանձնահատկությունները:
7. Լեզվական նորմ կամ կանոն. լեզվի նորմավորման չափանիշները:
8. Հայերենի ուղղագրության հիմնական սկզբունքները. ուղղագրական բարեփոխությունները (1922 թ., 1940 թ.):
9. Մեծատառերի գործածությունը:
10. Ուղղախոսություն. ձայնավորների արտասանությունը, ձայնավորական զուգորդումներ: Բաղաձայնների արտասանությունը:
11. Օտար բառերի արտասանության յուրահատկություններ:
12. Տողադարձ. տողադարձման սկզբունքները ժամանակակից հայերենում:
13. Շեշտը հայերենում:
14. Հնչյունափոխություն. տեսակները (պատմական, փոխազդեցական, դիրքային):
15. Բառի մենիմաստություն և բազմիմաստություն, բառիմաստի փոփոխություն: Իմաստափոխության տեսակները:
16. Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը: Գործուն և ոչ գործուն բառապաշար:
17. Բառապաշարի հարստացման միջոցները հայերենում:
18. Մասնագիտական բառեր (տերմիններ), բառ և տերմին, տերմինային հոմանշություն: Ժամանակակից հայոց լեզվի տերմինների կազմության աղբյուրներն ու միջոցները:
19. Համանուններ. առաջացման աղբյուրները, տեսակները, ոճական կիրառությունները:
20. Հոմանիշներ. տեսակները, ոճական կիրառությունները: Հոմանիշների շփոթություն:
21. Հարանուններ. տեսակները, ոճական կիրառությունները: Հարանունների շփոթություն:
22. Դարձվածքներ: Դարձվածքների ճիշտ գործածություն:
23. Դարձվածքային տարբերակներ և հոմանիշներ, դարձվածքային համանուններ:
24. Դարձվածքների առաջացման ուղիները: Դարձվածքների ոճական կիրառությունները:

25. Նորաբանություններ. տեսակները, ոճական կիրառությունները:
26. Հնաբանություններ. տեսակները, ոճական կիրառությունները:
27. Փոխառությունները ժամանակակից հայերենում: Օտարաբանություններ:
28. Բառակազմություն (արմատ և ածանց): Բառակազմական հիմքակազմիչ մասնիկներ:
Բառի ստուգաբանական վերլուծություն:
29. Բառերի տեսակներն ըստ կազմության: Վերլուծական և համադրական բարդություններ:
30. Ածանցում. ածանցների տեսակները:
31. Հապավում: Համառոտագրություններ:
32. Աշխատանքային գրագրության տեսակներ՝ դիմում, ինքնակենսագրություն, բնութագիր, տեղեկանք, երաշխավորագիր:
33. Աշխատանքային գրագրության տեսակներ՝ պաշտոնական նամակ (տեսակները), բացատրագիր, զեկուցագիր, հրաման, կարգադրություն:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԱՄԲԻՈՆ

Դասընթաց՝ «Հայոց լեզու և գրականություն-2»
Որակավորման աստիճան՝ բակալավրի կրթական ծրագիր

ԿԱԶՄՈՂՆԵՐ՝ Լ. Հայրապետյան (բ. գ. թ., դոց.), Ա. Մուրադյան (բ. գ. թ., ասիստ.)

ԾՐԱԳՐԻ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Յայոց լեզու և գրականություն-2»-ը պարտադիր դասընթաց է՝ նախատեսված Երևանի պետական համալսարանի լրագրության ֆակուլտետի բակալավրատի 1-ին կուրսի ուսանողների համար (առկա ուսուցում): Դասընթացին հատկացված է 32 ժամ, որից 8-ը՝ դասախոսություն, 24-ը՝ գործնական պարապմունք (շաբաթական 2 ժամ):

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Դասընթացը բաղկացած է երկու հիմնական մասից: Դասախոսություններով նախատեսվում է ուսուցանել արդի գրական հայերենի ձևաբանական հիմնական առանձնահատկությունները, մասնավորապես քերականական կարգ, խոսքի մասեր, դրանց դասակարգման հիմունքներ, խոսքիմասային փոխանցումներ, առկա տեղաշարժեր, շեղումներ: Յուրաքանչյուր խոսքի մաս ներկայացվում է քերականական բնորոշ հատկանիշներով:

Գործնական պարապմունքները ուղեկցվում են դասախոսությունների և հանձնարարված տեսական գրականության համադրական քննությամբ: Օգտագործվում են գործնական վարժությունների ձեռնարկներ, մանուլի լեզվի փաստական նյութի հիման վրա վերլուծվում են ձևաբանական իրողությունները, անդրադարձ է լինում ռադիոյի և հեռուստատեսության լեզվում հանդիպող քերականական սխալներին, շեղումներին, տրվում են առաջադրանքներ, որոնք նպաստում են գիտելիքների յուրացմանն ու ամրապնդմանը:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Դասընթացի նպատակն է ուսանողին սովորեցնել ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության առանձնահատկությունները, ճանաչել տալ հայերենի խոսքի մասերի քերականական հատկանիշները և դրանց դասակարգման հիմունքները, խոսքիմասային արդի փոխանցումները, հոլովման ու խոնարհման համակարգերի յուրահատկությունները, ինչպես նաև ընդգծված ներկայացնել այս ոլորտում կատարվող լեզվական արդի տեղաշարժերը:

ԿՐԹԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Դասընթացի հաջող ավարտին ուսանողը կկարողանա.

- ամփոփ և ամբողջական պատկերացում ունենալ հայոց լեզվի ձևաբանության մասին,
- ճանաչել ձևաբանական իրողությունները, ճիշտ և տեղին կիրառել հատկապես զանգվածային տեղեկատվության միջոցների լեզվում,
- կատարել ինքնուրույն վերլուծություններ:

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Դասախոսություններ

1. Ձևաբանության ուսումնասիրության առարկան և խնդիրները: Խոսքի մասերի դասակարգումը: Նյութական իմաստ արտահայտող խոսքի մասերի ընդհանուր բնութագիրը: Սպասարկու բառեր: (2 ժ.)
2. Գոյականը որպես խոսքի մաս, իմաստային խմբերը: Գոյականի թվի կարգը: Գոյականի հոլովի քերականական կարգը: Հոլովումներ. արտաքին և ներքին հոլովումներ, այլաձև հոլովումներ: Ձուգածությունները հոլովման համակարգում: (2 ժ.)
3. Բայը որպես խոսքի մաս: Դիմավոր և անդեմ ձևեր: Դերբայների տեսակները: Սեռի, եղանակի քերականական կարգերը: (2 ժ.)
4. Չթեքվող խոսքի մասեր: (2 ժ.)

Գործնական պարապմունքներ

1. Ձևաբանության ուսումնասիրության առարկան և խնդիրները: Քերականական կարգ. հիմք և վերջավորություն: Խոսքի մասերի դասակարգման սկզբունքները: Գոյականը որպես խոսքի մաս, իմաստային խմբերը: (2 ժ.)
2. Գոյականի թվի կարգը: Գոյականի հոլովի քերականական կարգը: Հոլովումներ. արտաքին և ներքին հոլովումներ, այլաձև հոլովումներ: Ձուգածությունները հոլովման համակարգում: Առկայացման քերականական կարգը: (4 ժ.)
3. Ածական անուն, տեսակները, որական ասականների համեմատության աստիճանները: (2 ժ.)
4. Թվական անուն, տեսակները: (2 ժ.)
5. Բայը որպես խոսքի մաս, համադրական և հարադրական բայեր: Բայի արտահայտության ձևերը, անկախ դերբայներ: Կախյալ դերբայներ (ձևաբայեր): Բայի սեռի քերականական կարգը: (2 ժ.)
6. Բայի եղանակի և ժամանակի քերականական կարգեր: Դեմքի և թվի քերականական կարգեր: (4 ժ.)
7. Անկանոն և պակասավոր բայեր: (2 ժ.)
8. Դերանվան ըմբռնումը և դասակարգման հիմունքները: Դերանվան տեսակները: Դերանվանական հոլովում: (2 ժ.)
9. Մակբայ. տեսակները, կազմությունը, կիրառությունը: (2 ժ.)
10. Ոչ նյութական խոսքի մասեր: (2 ժ.)

1. Արրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, հ. 2, Եր., 1974:
2. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. ձևաբանություն, Եր., 2002:
3. Աղայան Էդ., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Եր., 1967:
4. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Եր., 2007:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Գիտելիքների ստուգումը անցկացվում է եզրափակիչ քննությամբ բանավոր հարցման միջոցով: Քննական տոմսերը կազմվում են ուսանողներին նախապես տրված հարցաշարի հիման վրա:

Եզրափակիչ քննության առավելագույն միավորը 20-ն է: Յուրաքանչյուր տոմս բաղկացած է տեսական 3 հարցից:

ՀԱՐՑԱՇԱՐ

«ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ-2» ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՄՓՈՓԻՉ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

1. Ձևաբանության առարկան և խնդիրները: Բառն իբրև ձևաբանության ուսումնասիրության առարկա:
2. Քերականական կարգ: Քերականական իմաստ և քերականական ձև:
3. Ձևույթ, նրա տեսակները:
4. Խոսքի մասեր, դրանց դասակարգման սկզբունքները:
5. Խոսքիմասային փոխանցումներ:
6. Գոյականը որպես խոսքի մաս: Գոյականի իմաստային-քերականական խմբերը:
7. Գոյականի թվի քերականական կարգը:
8. Հոլովի քերականական կարգը:
9. Հոլովման համակարգը ըստ հիմնգ, վեց և յոթ հոլովների տեսությունների:
10. Հոլովական իմաստ, ձև և պաշտոն:
11. Հոլովում, նրա տեսակները:
12. Ձուգաձևությունները հոլովման համակարգում:
13. Առկայացման քերականական կարգը:
14. Ածականը որպես խոսքի մաս: Ածականի տեսակները: Ածականի համեմատության աստիճանները:
15. Թվականը որպես խոսքի մաս: Քանակական թվականների կազմությունը և կիրառությունը:

16. Դասական թվականների կազմությունը և կիրառությունը:
17. Բաշխական և կոտորակային թվականների կազմությունը, կիրառությունը:
18. Դերանունը որպես խոսքի մաս: Դերանունների դասակարգման սկզբունքները:
19. Անձնական դերանուններ, դրանց հոլովումը:
20. Ցուցական դերանուններ, դրանց կազմությունը, հոլովումը:
21. Փոխադարձ, հարցահարաբերական դերանուններ, կիրառությունը:
22. Որոշյալ, անորոշ, ժխտական դերանուններ, կիրառությունը:
23. Բայը որպես խոսքի մաս, համադրական և հարադրական բայեր:
24. Բայի սեռը, տեսակները:
25. Բայահիմք. տեսակները, դրանց կազմությունը:
26. Բայի արտահայտության ձևերը, անկախ դերբայներ:
27. Կախյալ դերբայներ (ձևաբայեր):
28. Բայի դեմքի և թվի քերականական կարգերը:
29. Բայի ժամանակի քերականական կարգը. ժամանակաձևերի կազմությունը, վերլուծական և համադրական ժամանակաձևեր:
30. Անցյալ կատարյալ ժամանակաձև. դրա կազմությունը:
31. Բայի եղանակի քերականական կարգը. սահմանական եղանակ:
32. Ըղծական, ենթադրական, հարկադրական եղանակներ:
33. Հրամայական եղանակ:
34. Ժխտական խոնարհում:
35. Անկանոն բայեր:
36. Պակասավոր բայեր:
37. Մակբայը որպես խոսքի մաս, տեսակները:
38. Կապը որպես խոսքի մաս. կապերի տեսակները:
39. Կապերի հոլովառությունը:
40. Շաղկապը որպես խոսքի մաս. համադասական շաղկապներ:
41. Ստորադասական շաղկապներ:
42. Վերաբերական, տեսակները:
43. Չայնարկություն, տեսակները:

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
2013/2014 ուս. տարվա 2-րդ կիսամյակի 2-րդ ընթացիկ քննության
ՏԱՐԲԵՐԱԿ 1

Ֆակուլտետ ----- Ժուռնալիստիկա (բակալավրատ 2-րդ կուրս, հեռակա)
Առարկա ----- Հայոց լեզու և գրականություն

1. Բարդ ստորադասական նախադասություն, դրա տեսակները, կետադրությունը (2 միավոր)
2. Գոյական անդամի լրացումներ. կետադրությունը (2 միավոր)

«29» մայիսի 2014 թ.

Հայոց լեզվի ամբիոնի վարիչ՝

Յու. Ավետիսյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
2013/2014 ուս. տարվա 2-րդ կիսամյակի 2-րդ ընթացիկ քննության
ՏԱՐԲԵՐԱԿ 2

Ֆակուլտետ ----- Ժուռնալիստիկա (բակալավրատ 2-րդ կուրս, հեռակա)
Առարկա ----- Հայոց լեզու և գրականություն

1. Ղերբայական դարձված. կազմությունը, բնույթը, կետադրությունը (2 միավոր)
2. Բայական անդամի լրացումներ (2 միավոր)

«29» մայիսի 2014 թ.

Հայոց լեզվի ամբիոնի վարիչ՝

Յու. Ավետիսյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
2013/2014 ուս. տարվա 2-րդ կիսամյակի 2-րդ ընթացիկ քննության
ՏԱՐԲԵՐԱԿ 1

Ֆակուլտետ ----- Ժուռնալիստիկա (բակալավրատ 2-րդ կուրս, հեռակա)
Առարկա ----- Հայոց լեզու և գրականություն

3. Բարդ ստորադասական նախադասություն, դրա տեսակները, կետադրությունը (2 միավոր)
4. Գոյական անդամի լրացումներ. կետադրությունը (2 միավոր)

«29» մայիսի 2014 թ.

Հայոց լեզվի ամբիոնի վարիչ՝

Յու. Ավետիսյան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
2013/2014 ուս. տարվա 2-րդ կիսամյակի 2-րդ ընթացիկ քննության
ՏԱՐԲԵՐԱԿ 2

Ֆակուլտետ ----- Ժուռնալիստիկա (բակալավրատ 2-րդ կուրս, հեռակա)
Առարկա ----- Հայոց լեզու և գրականություն

1. Ղերբայական դարձված. կազմությունը, բնույթը, կետադրությունը (2 միավոր)
2. Բայական անդամի լրացումներ (2 միավոր)

